

Չարց Ինչպե՞ս է սահմանվում Արցախի Չանրապետության տարածքում գործող փոքր ՉԿ-երից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը:

Պատասխան 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արցախի Չանրապետության տարածքում գործող 7 փոքր հիդրոէլեկտրակայանների, որոնց ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 29,9 Մեգավատտ, էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 150,4 մլն. կՎտ/ժ: Կառուցման փուլում է գտնվում 1 փոքր հիդրոէլեկտրակայան՝ դրվածքային հզորությունը 11,562 մեգավատտ, էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 40,495 մլն. կՎտ/ժ:

ԱՅ -ն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՅ = ՇՊԾ + Մ + Շ :$$

Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի համար սահմանվում են միադրույք (դրամ/կՎտժ) սակագներ, որոնք հաշվարկվում են հետևյալ բանաձևով. $Մ = ԱՅ / ԱԷ$, որտեղ՝ ԱԷ-ն առաքվող էլեկտրական էներգիայի քանակն է:

2017 թվականի հունվարի 1-ից հետո լիցենզավորված փոքր հիդրոէլեկտրակայաններից (մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն) առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը Չանձնաժողովի կողմից սահմանվել է 2017 թվականի մայիսի 25-ի N 28-Ն որոշմամբ և կազմում է 28,243 դրամ/կիլովատտ/ժամ ներառյալ ԱԱՅ: Սակագները սահմանվում և վերանայվում են Չանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշմամբ սահմանված մեթոդիկայի համաձայն: Սակագները հաշվարկվում են հետևյալ հաշվարկային բանաձևով՝ հիմք ընդունելով գործող 25.4 դրամ/կիլովատտ/ժամ սակագինը.

$$T = T1 \cdot \left[K1 \cdot \frac{CPI}{100} + K2 \cdot \frac{R1}{R2} \right]$$

որտեղ՝ T-ն սահմանվող սակագնի մեծությունն է (դրամ/կիլովատտ ժամ),

T₁-ը գործող սակագնի մեծությունն է (դրամ/կիլովատտ ժամ),

K₁-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման՝ սղաճի տեմպով պայմանավորված և ընդունվում է հավասար 0,35-ի, իսկ 2019 թվականի օգոստոսի 1-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի ստացման, արևային և հողմային էլեկտրաէներգիայի համար՝ 0,1

CPI-ն Չանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա սպառողական գների ինդեքսն է նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ հրապարակված Լեռնային Ղարաբաղի Չանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից,

K₂-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխմամբ պայմանավորված և ընդունվում է հավասար 0,65-ի, իսկ 2019 թվականի օգոստոսի 1-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի ստացման, արևային և հողմային էլեկտրաէներգիայի համար՝ 0,9

R₁-ը Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքն է ընթացիկ տարում՝ հրապարակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից,

R₂-ը R₁ մեծության որոշման համար ընդունված ամսվան համապատասխանող ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքն է նախորդ տարում՝ հրապարակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից: